

Հայ - չինական տնտեսական համագործակցության հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հայ-չինական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 1999թ. օգոստոսի 3-ին կնքված Արձանագրության:

Համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 1999 թ.-ին՝ Երևանում: Վերջին, 6-րդ նիստը տեղի է ունեցել 2011թ. ապրիլի 7-ին՝ Երևանում: Նիստին մասնակցել են ՉԺՀ-ում ՀՀ Արտակարգ և Լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը և ՀՀ-ում ՉԺՀ Արտակարգ և Լիազոր դեսպան Տյան Չանչունը:

Նիստի ընթացքում կողմերը ներկայացրել են երկու երկրների տնտեսական իրավիճակը, քննարկել են հայ-չինական առևտրատնտեսական համագործակցության արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ երկկողմ առևտրում ապրանքատեսակների բազմազանության ավելացման և դրանց որակի բարձրացման խնդիրները, ենթակառուցվածքների զարգացման, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, էներգետիկայի, քիմիական արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտներում համագործակցության ընդլայնման, հայկական և չինական ձեռնարկությունների միջև կապերի ամրապնդման, համատեղ գործարար համաժողովների, ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպման հնարավորությունները, այլ խնդիրներ:

Նիստի արդյունքում ստորագրվել է Հայ-չինական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստի Արձանագրությունը:

Հայ-չինական տնտեսական համագործակցության հանձնաժողովի համանախագահներն են.

ՀՀ **Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը՝** հայկական կողմից,

ՉԺՀ **առևտրի նախարարության Եվրոպայի վարչության պետ Սուն Իյունֆուն՝** չինական կողմից: